ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2022Թ. 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մասիս Համայնքի կազմավորման գործընթացի սկիզբը իր էական ազդեցությունն է թողել 2022թվականի բյուջեի 1-ին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարման ընթացքի վրա:

Եկամուտներ

Մասիս համայնքի 2022թ.վարչական բյուջեի եկամուտների տարեկան 3 197 228 850 դրամ առաջադրանքի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 667 453 400 դրամ, կամ 1-ին եռամսյակի մուտքերի առաջադրանքը կատարվել է 21%-ով, որից սեփական եկամուտների՝ առաջադրանքը՝ 1 377 621 450 դրամի դիմաց կատարվել է 213 764 000 դրամ կամ կատարվել է 16%-ով՝ :

1.Հարկային եկամուտներ

Հարկային եկամուտների գծով տարվա համար նախատեսված 937 844 970 դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 150 896 065 դրամ, կամ մուտքերի առաջադրանքը կատարվել է 16%-ով, այդ թվում հողի հարկի առաջադրանքը կատարվել է 39%-ով, գույքահարկինը՝ 42 %-ով, գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 18%-ով, տեղական տուրքերը՝ 16%-ով, պետական տուրքերը՝ 27 %-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը՝ տարվա համար նախատեսված 57 453 000 դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 9 106 583 դրամ, Պետական տուրքերի առաջադրանքը՝ նախատեսված 18 000 000 դրամի դիմաց փաստացի կազմել է 4 936 700 դրամ:

2.Պաշտոնական դրամաշնորհներ

Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիայի և սուբվենցիայի գծով փաստացի մուտքերը կազմել են 452 889 800 դրամ:

3.Այլ եկամուտներ

Այլ եկամուտների առաջադրանքը նախատեսված 444 776 480 դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել է 63 667 535 դրամ,կամ կատարվել է 14%-ով, նույն թվում՝

հողերի վարձակալությունից եկամուտները՝ 13%-ով, այլ գույքի վարձակալությունից եկամուտները՝ 18%-ով:

Պատվիրակված լիազորությունների համար պետական բյուջեից մուտքերը կազմել է 799 600 դրամ:

4. Տեղական վճարների մասով բյուջեում նախատեսված 345 593 070 դրամի դիմաց գանձումները կազմել է 53 229 292 դրամ կամ կատարվել է 15%, որից աղբահանության վճարների մասով 160 255 000 դրամի դիմաց գանձվել է 21 327 100 դրամ կամ կատարվել է 13%-ով: Համայնքի պատվերով՝ մանկապարտեզների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով գանձումը կատարվել է 16 %-ով, երաժշտական և գեղարվեստի դպրոցների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով՝ 24 %-ով:

Ծախսեր

2022 թ. համայնքի բյուջեի վարչական մասի 1-ին եռամսյակի ծախսերը կատարվել է 11.1 %-ով՝ 3 197 228 850 դրամ առաջադրանքից կատարվել է 356 469 307 դրամ, որից՝ վարչական բյուջեի ծախսերը ըստ ծրագրերի կատարվել են՝

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը կատարվել է 16.8 %-ով:

Տնտեսական հարաբերությունների ոլորտում նախատեսված ծախսերը կատարվել է 7.8 %-ով:

Շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտի ծախսերը կատարվել է 7.4 %-ով:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն դասակարգմամբ նախատեսված ծախսերը կատարվել է 16.4 %-ով:

Հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգումով նախատեսված ծախսերը կատարվել է 9.8 %-ով:

Կրթության ոլորտի համար բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել է 13.1 %-ով:

Սոցիալական պաշտպանության ոլորտի համար նախատեսված ծախսերը կատարվել է 1.2 %-ով:

Մասիս համայնքի 2022թ. բյուջեի ֆոնդային մասի մուտքերը նախատեսված 2 990 213 400 դրամի դիմաց կատարվել է 1 580 578 095 դրամ, որից տարեսկզբի մնացորդը՝ կազմել է 1 367 609 900 դրամ, գույքի և հողի իրացումից մուտքերը՝ 212 968 196 դրամ:

2022 թ. բյուջեի Ֆոնդային մասի ծախսերը կազմել է 182 560 300 դրամ, որից կապիտալ ծախսերը ըստ ոլորտների կազմել է՝

ա/ Տնտեսական հարաբերությունների ոլորտում 65 046 146 դրամ,

բ/ Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության ոլորտում 12 254 000 դրամ,

գ/ Հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգման ոլորտում 30 879 453 դրամ,

դ/ Կրթության ոլորտում 74 381 355 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Ն.ՍԱՀԱԿՅԱՆ